IDBank

## Միջնորդավճարներ

## Հաճախորդի հաշիվներին կանխիկ/անկանխիկ մուտքագրվող/ելքագրվող գումարների նկատմամբ

| Հաշվի Արժույթ | ՀՀ դրամ (AMD) | | ԱՄՆ դոլար (USD) | | Եվրո (EUR) | | | ՌԴ ռուբլի (RUB) | | Վրացական լարի (GEL) | | Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ(GBP) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մուտք/Ելք | Մուտք | Ելք | մուտք | Ելք | մուտք | | Ելք | մուտք | Ելք | մուտք | Ելք | մուտք | Ելք |
| ՀՀ ռեզիդենտ Հաճախորդ | 0%* | 0.2% | 0% | 3% | 0% | 1%** | 3% | 2% | 0.5% | 0% | 0.5% | 0.6% | 0.5% |
| ՀՀ ոչ ռեզիդենտ Հաճախորդ | 0%* | 0.5% | 0% | 5% | 0% | 1%** | 3% | 2% | 1% | 0% | 1% | 0.6% | 1% |

Ուշադրություն

1. Հաճախորդի ՀՀ դրամով հաշիվներից կանխիկ գումարի ելքագրման դեպքում, սույն աղյուսակում նշված միջնորդավճարները չեն կիրառվում, եթե Հաճախորդն ունի կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափ:

2. Հաճախորդի արտարժութային հաշիվներից կանխիկ գումարի ելքագրման դեպքում սույն աղյուսակում նշված միջնորդավճարները չեն կիրառվում, եթե Հաճախորդն ունի կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

Հաճախորդը կանխիկ ելքագրման ենթակա գումարը ստացել է անկանխիկ եղանակով (փոխանցումով), ապա մինչև 2 500 000 ՀՀ դրամ (ներառյալ) համարժեք արտարժույթով գումարի ելքագրումն իրականացվում է կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափի հաշվին, իսկ 2 500 001 ՀՀ դրամին և ավել գումարին համարժեք արտարժույթի ելքագրումը՝ առանց հաշվի առնելու կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը, համաձայն վերոնշյալ աղյուսակում նշված միջնորդավճարների կիրառմամբ:

Կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը (որի առկայության դեպքում կանխիկ գումարի ելքագրման միջնորդավճար չի կիրառվում) ձևավորվում է յուրաքանչյուր արժույթի գծով առանձին-առանձին՝ ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրումներից և կազմում է տվյալ արժույթի ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ մուտքագրված գումարների հանրագումարը: Հաճախորդի ընթացիկ հաշվից կանխիկ գումարի ելքագրման դեպքում նշված սահմանաչափը նվազեցվում է ելքագրվող գումարի չափով՝ ելքագրվող արժույթի համար ձևավորված սահմանաչափից:

* Դրամարկղի միջոցով ՀՀ դրամ արժույթով կանխիկ դրամի մուտքագրում մինչև 50,000 ՀՀ դրամը -200 ՀՀ դրամ միջնորդավճար

** 500 եվրո անվանական արժեքով կանխիկ գումարի մուտքագրում հաշվին

Ուշադրություն՝

Կանխիկ միջոցների մուտքագրում և ելքագրում իրականացվում է միայն վերոնշյալ արժույթներով, Բանկի համար ընդունելի այլ արժույթներով ընթացիկ հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրման/ելքագրան ծառայությունը չի մատուցվում: